

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 78

ԳՐԱԴԱՐԱՆԱԿՑՈՒՅԹ ՄԱՍՏԻՎԱԿԱՆ ԽՈԲ 1



ՍԵՐՄԱԱՑՈՒԵԲՈՒ  
ԸՆՏՐՈՒԹԵՆԵՆ ՍՊԱՍՈՒԱԾ  
ՕԳՈՒՏՑԵՐԸ

ՊԱՏՐԱՍՏԵ  
ՄԻՔԱՅԵԼ ՆԱԲԱՆԵԱԾ

Գյուղական-Տեղայ Միացեալ Ընկերություն  
Կիդիկայ ուղականիք գործություն



ՏԱԿԱՐՈՒԹՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

0. 0. 0. 0. 0.

1911

631.52  
Հ-16

24 SEP 2010

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ԳՐԱԴԱՏԱՆՍԱԿԱՆ ՄԱՏԵՎԱԾՈՐ — թիվ 1

631-52

7-16

ՍԵՐՄՆԱՑՈՒՆԵՐՈՒ  
ԸՆՏՐՈՒԹԵՆԵՆ ՍՊԱՍՈՒԱԾ  
ՕԳՈՒՏՆԵՐԸ



ՊԱՏՐԱՍՏԵՑ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԲԱՆԵԱՆ

Գիւղատնես-Տեսուչ Միացեալ Ընկերութեանց  
Խիլիկիոյ օքանակի վարժարանաց



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Շ. Կ. - Պ. Ա. Պ. Կ. Ե. Ա. Կ.

Կ. Պ. Ա. Կ. Ե. Ա.

1911

0005 932 49  
10.07.2013

17.092

ՅԱՌԱՋԱԿԱՆ

Չամ հասարակ եւ ամենուն ծանօթ պարագայ մըն և  
Սերմնացուներու բնիւրեան խնդիրը, եւ սակայն,  
զիտեմ ինչո՞ւ, ամենուն ինչ կարեւորութիւնը կը տրոյի  
առու: Ամեն մարդ շամ աղեկ զիտէ քէ միա՞յն բա հունեկ  
բա եւ առաս բերք կը սացուի. այնու ամենայնին ընդհան-  
րապէս անհնող կը վերաբերուին այդ ըներութեան հանդիսակ  
եւ կամ ըներելու պահուն՝ շամ ամենատար եղանակաւ մը  
կը կատարեն այդ ըներութիւնը :

Այնպիսի երկիրներու մէջ, ուր կամ երկրագործական մաս-  
աւուր հասաւութիւններ (stations agronomiques) Կառա-  
վարութեան հսկողութեան ներքեւ, հմանօրինակ պարագա-  
ներու մէջ ահազին դիւրութիւններ կ'ընձանեն անոնի  
ժողովուրդին. նոյնպէս, ծանօթ քնար-սուլերը պատ-  
րաս հոգածութեամբ մը կը ցանեան լուս կարի մասուր եւ  
արուեստական ընթականութեամբ մը (élection artificielle)  
բա սերմնացուներ հայրայրել իրենց յաճախորդներուն, քե-  
զիտէ այս պարագան իրենց այնին սիստեմական ըլլալ: Բայց  
մը երկրի երկրագործական շշանակներուն մէջ այդ տեսակ  
հասաւութեանց բացառակ չգոյութիւնը եւ հողագործ  
դասակարգին սերմնացուներու ըներութեան մերուներուն  
նկատմամբ ունեցած զիտութիւնը ու անենց աղեկ կամ զիշ  
նետեամեններուն մասին գաղափար մը ցունենալը մասնա-  
ւոր կարեւորութիւն մը կ'ընձանեն խնդրին: Հետեւարա-  
րժան աշ գրուի շամ յէ այս պիրին վրայ:



Հ 2 178 - 67

Ուսի, հետեւով եւրոպական նշանաւոր բուսաբան-  
հողագէմներու փորձերուն եւ թերադրութեանց, ներկայ  
գրքով զեղու դրդուեցակի օգտակար ձեռնարկ մը ընելու  
վասահորեամբ, ինչ որ ներկայս գրողին եւ հրատարակող  
Մարմնոյն միակ փարձարութիւնը պիտի ըլլայ :



## ՍԵՐՄՆԱՑՈՒՆԵՐՈՒ

ԸՆՏՐՈՒԹԵՆԵՆ ՍՊԱՍՈՒԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԸ



Ա. — ԱՌԵԽՍԱԿԱՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԻԶԲՈՒՆՔԸ.

Ապրու էակները — կենդանի կամ բոյս — բնա-  
շրջումի օրէնքով միշտ փափոխութեան ենթակայ  
ըլլալով, յաճախ վասնգի ներքեւ դժնուած են իրենց  
նմանուղ և կամ այլառեռ բոյսներու կամ կենդանեաց  
պատճառաւ :

Ապրին ու յառաջգիմնելը յաւիտենական մրցու-  
մի, կոփուի և լոււագոյն յարմարումներու արդիւնք  
նդած են լոկ :

Գոյսութեան անխուսափելի պայմաններն են մրցու-  
մը, կոփուը և յարմարումը (adaptation), իրենց աւելի  
կամ պակաս յաջողութեամբ, նայելով այդ էակներուն  
դիմադրական յատկութեանց աեզական ու շրջապատող  
հանգամանքներուն հանդէպ, և այն բնական զէնքերուն՝  
որով անսնք օժտուած են :

Բոյսներէն ու կենդանիներէն ապրած, տեւած, աճած  
և զարգացած են այնպիսիները միայն որ կարողացած  
են ոչ միայն չէզոքացնել շրջապատող թշնամի գոյս-  
ցութեանց իրենց համար վնասակար ներգործութիւն-  
ները, այլ և յաջողած են լոււագոյն կերպով շահա-

գործել — յաճախ ի վասա ուրիշներու — միջավայրը , և յարմարիլ տեղական պայմաններուն :

Ենական է ենթադրել , որ բիւրաւոր բոյսեր ու կենդանիներ՝ որոնք չեն կրցած գոհացնել գոյութեաւ կոփւին այս անհրաժեշտ պահանջները՝ կա՛մ անհատացած են երկրիս երեսէն , կա՛մ նուազած և կա՛մ զարգացման ստորին աստիճաններուն մէջ մնալու դատապարտուած :

Ասիկա հետեւանք է բնական ընտրականութեան (sélection naturelle) : Ասոր մէջ , բնութիւնը և ապրով էակները — բոյս թէ կենդանի — դէմ դէմի ելած և իրարու հետ կոռուած են՝ իրը գլխաւոր գերակատարներ՝ իրենց գոյութեան և զարգացման կոփւը որ անտարակոյս վերջացած չէ և չի կրնար երբեք վերջացած համարուիլ :

Ապրով էակներու իրերամարտ այս մրցումը և աշխատութիւնը առաջ եկած է անսնց սերնդագործութեամբ յարատեւելու և ոննդառութեամբ ապրելու դրգիւէն ու պատճառներէն :

Առաջին պարագան — սերնդագործութեամբ յարատեւելու կոփւը — տեղի կ'ունենայ ընդհանրապէս նոյնատեսակ էակներու միջև , մինչ երկրորդը՝ տարառեաներու մէջ :

Այսպէս , եթէ աչքի առաջ ունենանք վայրի կենդանիները , կը տեսնենք թէ՝ ինչպէս խումբի մը մէջ ամէնէն հզօրը , հումկուն և ցեղին բոլոր յատկութիւնները իւրացուցած արո՛ւն է որ կը կատարէ սերնդագործութեան պաշտօնը , բոլոր միւս համառակորդները հալածելով՝ մինչև որ իրմէ աւելի հումկու և զօրաւոր ուրիշ մը , առավալելով զինքը , իր պաշտօնը ինք ստանձնէ :

Այս իսկ է , ինչպէս ըստնք , սերնդագործութեան մէջ բնական ընտրականութիւնը , ուր բնութիւնը ինք

կը գործէ ի նպաստ տեսակներու ազնուացութիւն , իրեն յատուկ միջոցներովը :

Բոյսերը և կենդանիները իրենց կեանքը պահելու — այսինքն ապրելու և ամելու — համար հարկաւոր մնունդը կը քաղեն երկրէն , անոր հաստատուն , նեղուկ ու կազային մարմիններէն , գերածելով մարսուելու և իւրացուելու վիճակի մը , կամ արգէն իսկ պատրաստ գտնելով զայն :

Այս սկզբնական ձեւէն մեկնած անշուշա , կեանքը բնաշրջութեան (évolution) ընթացքին մէջ , սննդառութեան այս եղանակը հետզհետէ փոխուելով և էակներու բազմացումին և գօրութեան առջեւ՝ նեղ ու անբաւական գալով . առաջ բերած է ա՛յն պարագան որ անսնք ստիպուած են , ուրիշի մը տեղը գրաւելու կամ իրենց տեղը պահելու համար , ոչ միայն կոռուիլ այլոց դէմ , այլ և նայելով իրենց գիւրութիւններուն , զէնքերուն և առաւելութիւններուն , իրենցմէ տկարները — զերազանցապէս պատրաստի կերակուր — իւրացնելու և ապրելու :

Այս վիճակը ժամանակի և դարերու ընթացքին մէջ ժառանգականութեան օրէնքով հաստատուելով ու հետպահեալ շեշտուելով , առաջ բերած է երկու զասակարգներ , անսնք որ կ'ապրէին և կ'ապրին ուղղակի բնութենէն՝ անկէ առնելով իրենց մննդեան հարկաւոր տարրերը և պէտքերը , և անսնք որ կ'ապրէին ու կ'ապրին թէ՛ մէկով թէ՛ միւսով , այսինքն թէ՛ գործարանաւոր մարմիններով և թէ բնական արտագրութիւններով :

Բոյսերը իրենց մնունդը գլխաւորաբար մթնոլորտէն և հողէն ստանալնուն համար ամհարժ են . իրենց ստորին մասերովը հողին մէջ հաստատուած՝ անսնց միջոցաւ հողին մէջէն զաելով կ'առնեն հարկաւոր եղած ջուրը և հանքային սփոթերը , ինչպէս որ իրենց վերի մասերավը՝ տերեւներովը ու կանանչ ձիւղերովը՝ կ'իւրացնեն օղին թթուածինն ու բնածուխը :

Իսկ կենդանիները՝ օժառւած ըլլալով կարգ մը այնպիսի գործարաններով որոնցմէ զուրկ կը մնան բայսերը՝ շարժուն են և կ'ապրին ընդհանրապէս առաջնորդ, այսինքն բայսերով, որք՝ ինչպէս յայտնի է մննդառութեան գերազանց հիմք կը կազմեն<sup>(1)</sup>:

Սակայն ինչ որ ուշագրաւ է սա է որ կենդանիները եւս բաւական չգտնելով բայսերու այդ հակայ ծառայութեանը՝ առանց որուն իրենց գոյսութիւնը սփափի չկրնային պահպանել՝ սկսան իրենք եւս իրարու դէմ կռուիլ ու մրցիլ, ոչ միայն իրարու ձեռքէն խլելու համար բայսերը և տունկերը, այլ և զիրար բզքակելով իրարմով ալ մնանելու համար։ Այս եղաւ որ անոնցմէ ոմանք ժամանակի ընթացքին մէջ այնքան զարգացան իրենց կազմովք և մննդառական գործարաններով, որ բարորովին հրաժարելով բառային կերակութիւնը՝ շարունակեցին մի միայն ուրիշ կենդանիներով սնանի, բնականաբար շատ աւելի համեզ և հիւթեղ։

Ահա թէ ի՞նչպէս ծագում առին բուսակերները, բուսակեր-մասակերները և զուտ մասակերները։

Մարդու, կենդանեաց մէջ ամէնէն աւելի առաջացածը և կատարելագործեալը, կենդանիներէն անհամե-

(1) Ասիկս ըսել չէ թէ բայսը բոյսերը ինքնասուն են եւ զիան այնպիսիներ որ կ'ապրին ի հաշիւ ուրիշ տունկերու եւ կենդանիներու։ Մակաբայ (parasite) եւ Սարցօթիք բայսերու առաջող լէգէռն մը կայ որ կ'ապրի միմիայն ի վնաս ուրիշ բոյսերու եւ կենդանիներու։

Ալսպէս են, օրինակի համար, ծաղիկաւոր բայսերէն զայրուկը եւ կին (guy) եւ անծալվելուն՝ սնկիթերը եւ միերաբները, Ամսոնք միակ տարբերութիւն մը ունին իրարմէ, այսինքն թէ Մակաբայ կ'ապրին ուղղակի ասլրող էտիներուն վրայ, ի վնաս անոնց, իսկ Սարցօթիքները՝ ընդհակառակն՝ կ'ամին մեռած մարմնոց վրայ եւ զանոնք մէջտեղէն վերցնելով օգտակար գործ մը կը տեսնեն։

մատ աւելի բարձր իմացական կարսղութեամբ մը օժտուած, որ դարերու ընթացքին մէջ աիրացութ էր կազմական այլազան յարմարութիւններու, բնական է թէ շատ կանուխէն սկսելով ձգտութ է ապրիլ, մնանիլ, անիլ ու զարգանալ ուրիշ բայսերու և կենդաննեաց կեննքին գինովը և անոնց հաշուսն։

Որորդական նախնական կենցաղէն յետոյ, մարդու կամաց կամաց թողովի իր թափառայած ու վայրենի վիճակը, տակաւ հաստատաբնակ դառնալուն հետ մէկտեղ ջանացած է իր ապրուսին և մննդեան հայթայթումին ծառայող բայսերն ու կենդանիները իրենց ընական՝ այսինքն վայրենի վիճակէն ազատել և յատկապէն զանոնք իրեն համար մշակել ու պահպանել մասնաւոր խնամքներով։

Երկրագործութեան սկիզբն է ասիկա, ուրիշ յետոյ կը սկսի հողագործութեան ու անամնաբուժութեան, և կամ ինչպէս կ'ըսեն՝ գիւղատնակութեան արուեստը, որ ուրիշ նպատակ չունի. եթէ ոչ իր մշակած բայսերէն ու պահպանած կենդանիներէն նուագագոյն աշխատութեամբ մը և քիչ ծախօսութ շատ և լաւ արդիւնք ձեռք բերել ու զանոնք աւելի ի վիճակի և յարմար գարձնել իրենց համար առաջադրութ նույսականութեամբ։

Բնական ընտրականութիւնն յետոյ, ահա մարդու, և կամ ուրիշ բառով՝ արհեստական ընթրականութիւնն է ուրեմն պատճառը այժմու ծանօթ կենդանեաց ու զործածական բայսերուն և տունկերուն փոխուած, կամտարելագործուած ու ազնուացած վիճակին, որ շատ անգամ գլխովին կը տարբերէ զանոնք իրենց սկզբնական կամ վայրի տեսակներէն։

Երկրագործական արտադրութիւնները — բոյս թէ կենդանի — արդարեւ նոյնը չեն և չէին կրնար ըլլալ ինչ որ էին ի հնումն, մարդուն աշխատութիւնը գերշմիջամտած։ Դարերու հոլովումին մէջ, այդ աշխա-

տութիւնը, թէկ յամբ և յաճախ անզգալի՝ բալց երբեմն ալ բնդստ սստումներով՝ փոփոխութիւններ մտցուցած է անոնց գոյութեան մէջ, զգալապէս ազդելով անոնց վիճակին վրայ:

Եւ այսպէս, բնութեան հետ մարդն ալ՝ նախապատմական երկրագործէն սկսելով մինչեւ այժմու գիտնական գիւղատնտեսը՝ իրենց ջանքը և բաժինը բերած են յիշեալ փոփոխութեանց մէջ, ուր անոնցմէ իւրաքանչիւրը տուած է իր գրաշմը. կատարելագործութիւնը, որքան ալ ան եղած ըլլայ փոքր և աննշան:

### Յ. — ԸՆՏՐԱԿԱՆ ՈՒԽԹԵԱԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Գիւղատնտեսական գիտութեանց ջանքը կը կայնայ ուրեմն, յատուկ սիստէմով մը, գիտակցաբար և որոշուած նպատակի մը համաձայն, կատարելագործել ընտանի կենդանեաց և մշակելի բոյսերուն այն ամէն տեսակները որոնք կոչուած են ո և է կերպով ծառայութիւն մը մատուցանել մարդկութեան և քաղաքակրթութեան:

Ատոնց մեզ ընծայած այդ ծառայութիւնները բնականամբար միատեսակ չեն և չեն կրնար ըլլալ, տրուած ըլլալով պահանջներու պիսպիսութիւնը; Եւ ընտրակականութիւնը՝ այս պարագաներուն տակ՝ որոշեղանակի մը հետեւած է զարդացնելու, չեցտելու և հոստատելու համար կենդանիներու և բոյսերու մէջ այն յատկութիւնները ընդհանրապէս՝ որոնցմով միայն անոնք մեզի օգտակար կրնան ըլլալ:

Այսպէս՝ յիշենք օրինակի համար՝ ցորենը, նմանօրինակ արմատիքները և բակլոն, ոսովը ևայլն: Ատոնց մշակութեան մէջ երկրագործին կամ հողագէտին ջանքերը

ուղղուած ըլլալով անոնց սերմիկներուն կամ հատիկներուն պէսպիսութեանը, մեծութեանն ու որակին, բնաւեկամ շատ քիչ ուշադրութիւն տրուած է անոնց միւս մասերուն — զօղունին, սերեւին կամ արմատին:

Դետնափանձորին արտաքին մասերը և հունտերը երկրագործը անտարբեր կը ձգեն. անիկա միայն այդ տաւնկին արմատներուն վրայ բուսած ուռիկներու (tubercules) մեծութեամբը, նշայի հարստութեամբը և դիմացկունութեամբը կը հետաքրքրուի:

Պաւողներուն մէջ, ծառերուն ձեւը, տերեւներուն տեսակը՝ և արմատները կարեւորութիւն մը չեն ընծայեր: Մարդու կը փնտոէ միայն պատուղներուն յատկութիւնները, անուշութիւնը, գիւղամարսութիւնը, համը, առատութիւնը ևն: Անոնց սերմերուն ձեւն ու քանակութիւնը նոյնպէս չի հետաքրքրեր պարտիզպանը:

Ծալիկեմշակութեան մէջ, բնականամբար ծալիկն ու տերեւներն են մեր ուշագրութիւնը գրաւովը: Անոնց գեղեցկութիւնը, հոտաւէտութիւնը, բազմազանութիւնն ու գոյներն են որ կը շատագրգռան ծալիկեմշակը, որով ո՛չ պտուղը, ո՛չ սերմերուն տեսակը և ոչ ալ արմատներուն ձեւը կարեւորութիւն ունին իրեն համար:

Սոխի ու սիստորի նման տունկերուն մէջ, բնդնակասակն, մարդու հետամուտ է անոնց արմատն վերեւը աճող կոճղէզներուն (bulbous) և տերեւներուն — այսինքն ուսակի մասերուն, և չի հետաքրքրուիր ո՛չ անոնց թելանման արմատներուն և ոչ ալ սերմերուն ձեւովը:

Ատաղձածառերուն և անտառափայտերուն համար, ընդհակառակն, անտառաբանը կը ջանայ ուղիղ, բարձր և առողջ ծառեր ունենալ, յարմար կահագործութեան, բնակարաններու շինութեան և ալլն: Անոնց պտուղը կարեւոր արժէք մը ընծայեր իրեն:

Ճակիսդեղին մէջ՝ արմատներուն մեծութիւնը և

քաղցրութիւնը միայն կը փնտոէ հողագործը, ինչպէս որ ծխախոտին՝ տերեւներու մեծութիւնը, նրաւթիւնը և հոտը, կազմաբին՝ տերեւներու առատութիւնը, թարմութիւնը և համեղութիւնը, կանեփին՝ կեղեւի հիւսուածաթելերը, որակը և քանակը, տորոնին՝ արմատներու գունաւորութիւնը, ճարակաբոյներուն՝ համեղութիւնը, մաստութիւնը, մննդաբարութեան աստիճանը և առատութիւնը, բամպակին՝ պստիճներու (capsules) առատութիւնը և թելիկներու երկարութիւնը ու նրաւթիւնը, սուսամին, ձիթենին և դափնիին՝ խւզաշատութիւնը, ափօնին՝ հիւթին առատութիւնը և զօրեզութիւնը, և այն և այլն։ Ահա՛, ինչ որ կը փնտուին օգտակար բայսերուն մէջ, նայելով անսնց տեսակներուն, յատկութեանց և այդ յատկութեանց ինչ կերպով և ինչու համար գործածութեանը։

Կան թէկիմ խօսելով արտւեստական կամ մարդու ձեռամք կատարուած ընարականութեան վրայ, կ'ըսէ։

«Կարդ մը բայսերու գոյութեան կռիւին մէջ մարդու միջամատութիւնը ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ զայն իր բնական ընթացքէն շեղելով իր օգուտին տեսակէտովը ուզղել։ Այսպէս ալ, միեւնոյն նախնական տեսակէն սերած մշակելի բոյսի մը զանազան տեսակներուն բնութիւնը, կազմութիւնը, յարմարութիւնները յաճախ կապուած են և հետեւանք են այն նպատակին որուն ձգտած է հողագործը և զոր ուզած է տալ անսնց։

Մշակուած ցորենները, կը շարունակէ թէկիմ, իրենց ցողուններուն և տերեւններուն ձեւովը մարդը անտարբեր կը թողուն, բայց անսնք խորապէս կը տարրերին իրարմէ իրենց հատիկներուն տեսակներովը, մեծութեամբը, նշայի (amidon) կամ սնձանի (gluten) հարբաստութեամբը, ու ատոնք են միայն որ կը հետաքրքին հողագործը։

Կաղամբներու տեսակները, ընդհակառակն, շատ քիչ կը տարրերին իրենց սերմիկներուն, պառվին և ծաղիկներուն մէջ որոնք մեզ անապրը կը թողուն, բայց անսնք մեծապէս փոխուած են ու կը աարբերին իրարմէ իրենց այն մասներով զորա մենք իրը կանաչեղին կը գործածենք, որպէս և իրենց համեղութեամբը, մաստութեամբը, թարմութեամբն ու մեծութեամբը որոնցման կը հետաքրքրուինք։

Ճակնդեղը իր տերեւներավը քիչ կը տարբերի, մինչ հակոսակն է իր մաստ արմատն մեծութեամբը, շատ քարուտութեամբը, ձեւովին ու գոյնովը։

Վերջապէս ծաղկեմշակութեան մէջ ալ, գլխաւորաբար ծաղիկներն են մեզ հետաքրքրովը։ Իրենց գունաւոր շափրակներուն (corollas) գանազանութեամբը և ձևերովը՝ որոնք բայսէ բայս խորապէս կը տարբերին։ Ծաղկնմակութեան մէջ մարդուն նպատակը եղած է ուրեմն զարգացնել ծաղկներուն ձևը, գոյնը, հոտը, մեծութիւնը են։

Մշակուած բայսերու այս ձեւափոխութիւններուն կամ անսնց յատկութեանց այս փոփոխութիւններուն և մարդուն ձգտումներուն մէջ գտնուած սերտ կապը դիւրութեամբ կը բացարարուի։ Կը յարէ վ., թէկիմ։

Մարդս, նախնական շրջաններէն մինչեւ հիմա մշակած ու զարգացուցած է մասնաւորապէս այն տունկերը միայն, որոնք իրենց ու եւ մէկ յատկութեամբ՝ աւելի քան մէկ տրիշը՝ կրնացին իր կարիքներէն մէկուն գոհնացում տալ։ Այսպէս, բազմաթիւ բայսերու մէջ, անիկա ընտրած է գլխաւորաբար անսնք միայն, որոնք իր ու եւ մէկ պէտքին ու փափաքին աւելի կը յարմարին, և հետեւագար զանսնք, հետպհետէ և շարունակաբար, նոյն այդ նպատակաւ մշակած է։

Ցաջորդական շրջաններու մէջ պատահած է որ անսնց մէ մէկ քանիները միւսներէն լաւագոյն արդիւնք տուած

են՝ վնասուուած տեսակէտէն, որով մարդն ալ բնական է աւելի ուժ տուած է՝ համասեռ տեսակներու մէջ՝ ատոնց մասնաւորապէս, և զանոնք զործածած է յետագայ մշակութեանց համար իբր սերմնացու. ինչ որ բնականաբար տարբերութիւններ յառաջ բերած է այդ տեսակին մէջ իբր նախատեսակներուն վրայ:

Այս եղանակու մշտկուած բոյսերուն մէջ, մարդուն փափաքած և հետապնդած յատկութիւնները աճած և զարգացած են շարունակաբար և հետզնեաէ. ի մետու յատկութեանց: Պատահած է, անշուշտ, որ այդ տեսակներուն մէջ բոյսերու ուրիշ յատկութիւններ եւս փոխուած են, բայց որպէս համար մարդու անոնց պէտք չունենալուն համար ուշադիր և հետեւող եղած չէ. բնական է հետեւցնել թէ այդ յատկութիւնները սփուգեադիք խնամքէ դուրիկ մնալով՝ չեն կրցած տեսական զարգացում մը ունենալ, կամած են կամ կրաստած:

Արհեստական ընտրականութիւնը (sélection artificielle) ուրեմն մշակուած բոյսերու տեսակի փոփոխութեանց մեծագոյն ազդակին եղած է, և մարդը, մեթօսիկ կերպով մը կառավարելով այդ ուղղութիւնները, զանոնք ուղղած է անոնց ընծայած յարմարութեանց համաձայն՝ իբր պէտքերուն գոհացում տալու եղանակով մը:

Այս առթիւ, իբր միջանկեալ ըսենք նաև թէ այն տաւնկերը՝ զորս մարդս իբր պէտքերուն գոհծածելու համար այդ եղանակով զարգացնելէ վերջ լքած է յետոյ՝ յաջորդաբար կորսնցնելով իբրնց ստացական այդ յատկութիւնները. կամաց կամաց իբրնց բնական վիճակին կը գտանան նորէն (atavisme). ինչ որ կ'ապացուցանէ թէ ո և է տունկ, որքա՞ն ալ իբր բնական վիճակին ելլելով փոփոխութեանց ենթարկուի, այդ երեւոյթն իբր կեանքին մէջ տարականանու-

թիւն մը (anomalie) ըլլալով, պատճառը գաղքելուն և ինքզինքին թողուածին պէս, նորէն իբր հին և նախնական վիճակին կը ձգտի: Այս երեւոյթը ընտանի կենդանիներուն մէջ ալ կը տեսնուի յաճախի»:

Ընտրականութեան մասին ինչ որ ըսինք բոյսերու համար, միեւնոյն օրինակները կրնանք յիշել նաեւ ընտանի կենդանիներու համար:

Տունկերու նման՝ կենդանիներէն մէկ մասը եւս ընտանեցուցուած կը պահուին և կ'ազնուացուին, հետեւելով իբրնց ընծայած յատկութեանց և այդ տեսակէտպէ իբրնցմէ սպասուած օգուաններուն:

Այսպէս, օրինակի համար, մարդուս քաղաքակրթական ջանքերուն մեծագոյն ստատար և օգտակար եղող կենդանիներէն ձին, կը վնասուի և կը մեծցուի, պարագային համաձայն՝ իբր բնանաքարչ, կառաքարչ, բեռնակիր և հեծնելիք: Ուստի և ամէն ատեն ջանք եղած է ուժ տալ ձիւն մէջ այն յատկութեանց որ կը յարմարին իբրէ սպասուած ծառացութիւններուն Այսպէս, հեծնելու և վազելու ձիերու մէջ ոտքի նրբութիւն, իբանի թեթեւութիւն, եացն, իսկ կառաքարչներու և բեռնաքարչներու մէջ, ընդհակառակին, յաղթանդամութիւն և սոքերու հաստութիւն կը վնասուին միշտ:

Շունը, այնքան բազմատեսակ, թէեւ սերած միեւնոյն նախառհսակէն, կը վնասուի իբր հաւատարմութեան և անձնութիւններն համար, և իբր այդ՝ անային սիրելի և գգուելի անսառուն մըն է: Գիւղերու մէջ և համերու համար սակայն, չեն պահեր փոքրանասակ շուներ, և ոչ ալ այդ մեծ տեսակներէն՝ տուներու մէջ կը պահենք:

Ո՛չ ձին և եշը, ոչ ալ չունն ու կտտուն չենք պահեր իբրնց միսին և հայթայիթելիք սնունդին յատկութիւններուն համար, մինչ եզր, կովը, ոչսարը, այծը, խոզը ելն, կը պահուին, տեղին համաձայն, եղը իբ-

միսին, կովը՝ միսին ու կաթին, սյսարը և այծը՝ միսին ու կաթին, և խողը՝ միսին ու ճարպին համար :

Հաւը և նմանները կը պահնաք իրենց միսին ու հաւ-կիթին համար, չերամը՝ իր մետաքսին համար, մեղսուն՝ մեղրին, դեղձանիկն՝ իր երգին համար :

Աւզար, տօթակէզ անապատներու մէջ, ծարաւի և անօթութեան տոկացազ իր թանկագին յատկութեամբը էն յարդի անասունն է, ինչպէս որ Սրեպջերուն (Renne) հիւսիսի սառնամանեաց մէջ էն օգտակար կենդանին է :

Եւ այս ամէնը, որուն օրինակները թուելը մնզ շատ հեռուները պիտի տանէր, փնտուուած են, կը պահուին ու կը խնամուին՝ օգտուելու համար անսուց ընծայած յարմարութիւններէն՝ ջանալով զօրացնել անսուց մէջ այն յատկութիւնները, որոնցմավ անսուք ամէնէն աւելի մարդուն կրնան օգտակար ըլլալ :

Մինչ այս բազմազան տեսակները, իրենց բազմա-զան ծառայութիւններով, կոչուած են լրացնելու և զո-հացնելու մարդկութեան պէտքերն ու կարօտութիւնները, անդին գիւղատնտեսին ն զատակին ալ եղած է և կը ձգտի ըլլալ, միշտ, կարելի եղածին չափ նուազագոյն ծախ-քով մը և աշխատութեամբ, ստանալ անսոնցմէ աւելի, աւելի տեսակ և մըշտ աւելի յառատեսակ արդիւնքներ :

Գ. — ՏՈՒՆԱԲՐՈՒ ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹԵԱԾԱՆ ՄԵԹՈՑՆԵՐԻ

Տունկերու ըստականութիւնը՝ անտեսական երկառ-գործութեան տեսակէտով՝ ստանակարդ կարեւորութիւն ունեցող խնդիր մըն է :

Երկիրը — հողն — է որ կը մնայ նորէն մարդկու-թիւնը մնուցանող միջոցը, և բռնացին արտադրութիւն-ներն են որոնք կոչուած են իրենց բազմազանութեամբը

և պէսպիսութեամբը մարդոց ամենամեծ պէտքերը գո-հացնելու :


Ուստի բնական է որ երկրագործը, մանաւանդ արն-տեսական այս գժուարին ժամանակներուն մէջ ուր մրցութը և արտադրութեանց սպառումը իրենց ծայրա-գոյն ասաւ, ճանին հասած են, լրջօրէն խորհի իր արտա-դրութիւններուն որակին աղնուացման և քանակին բազմացումը աւագ ինդիրներուն վրայ :

Հողն ալ, ամէն բանի նման, գործածութեամբ մաշ-սեւելու, հիւծուելու և նոյնիսկ սպառելու ենթակայ է և չի կրնար մշտապէս արտադրել մրտատեսակ և միաբա-նուկ կերպով այն բոյսերը զօր իրեն կը վստահինք :

Հող մը՝ որ բնականէն չէ շահագործուած և հնտեւարար զեռ կոյս մնացած է, հոլ մը՝ որուն ծոցին մէջ սփռուն աննդական նիւթերը խրա-ցնելով սպառած չենք, կարելի է — անշուշտ ժա-մանակի մը համար — առանց միծ անդամանութեան, մշտակուիլ և բաւարար արդիւնք տալ : Բայց, գժբազ-դաբար, Մայր-Բնութիւնն ալ ենթակայ է ընդհանուր օրէնքներուն, ու երբ հող մը չի նորոգուիր և չի պարե-նաւորուիր բոյսերու աճումին անհրաժեշտ նիւ-թերովը, կամաց կամաց կիշնայ արտադրութեան իր նուազագոյն աստիճանին, որ տանը շատ անգամ իր վրայ թափուած ճիգերը, աշխատանքն ու ծախքերը ապար-դին կը հանէ : Հողին մանկական է առ պարզապէս :

Բուսական արտադրութեանց աղնուացման և կա-նանաւորումին պայմաններէն մէկը, և ապահովաբար ա-մենատաշինը, կը մնայ ուրեմն Վարելանովերուն կա-նոնաւար և նետութիւնը, որ կ'ըլլալ :

1. Պարբերաբար կատարուած խորունի ներկումնե-րով, որ ներքին, չահագործուած աննդական նիւթերը հողին երեսը բնակչութիւնը մշտակելի բոյսերու արմատներուն



մատչելի կը դարձնէ : Այս գործողութեան ուրիշ մէկ առաւելութիւնն ալ այն է որ վարելահողի (terre arable) խորունկ մասերն ալ օդ կ'առնեն և իր պարունակած կարգ մը հանքային մարմինները կ'օխիտանան : Խորունկ հերկումներուն ուրիշ մէկ կարեւոր օգուտար կը կայանայ նաև անոր մէջ, որ ատով օտար և վնասակար բոյսերու հունակեր հողին խորը կը միրճուին և արմատներն ալ արեւին բերուելով կը չորնան, որով հողը կը մաքրուի :

2. Փոփոխակի-Մօսկութեամբ հողին պարունակած ամէն տեսակ մնուցիչ նիւթերը կանոնաւոր և սիստեմադիք կերպավ մը շահագործելով : Այսինքն, որպէս զի նոյն հողին զանազան մնուցիչ նիւթերը օգտակարապէս արդիւնաւորուին, իրարու ետեւէ ամէն տարի պէտք չէ ցանել միշտ միեւնայն տեսակի բոյսը, այլ տարրեր տեսակէ այնպիսի բոյսեր որոնք հողէն տարրեր մնունդ պահանջելով՝ զայն չյոգնեցնեն և կահոնաւոր արդիւնք մը ձեռք բերելու դիւրութիւն տան :

Փոփոխակի մշակութեան շրջանը՝ նայելով հողերու տեսակին և պարարտութեան, ու ցանելի բոյսերուն՝ կրնայ ըլլալ 3-8 տարի : Այսինքն, նոյն հողին վրայ միեւնայն տեսակի բոյսը ցանել կարենալու համար, 3-8 տարուայ ուրիշ բոյսերու շրջան մը անցնելու է :

3. Եւ վերջապէս, Վարելահողերը մերոտիկ եղանակով մը պարարտացնելով՝ հանքային և մանաւանդ կենդանական և գործարանական պարարտութիւններով : Վերջիններս այն առաւելութիւնը ունին, որ թէև իրենց ներդործութիւնը առաջններէն շատ յամբ է, բայց աւելի տեւական է և միանգամայն վարելահողերը ֆիզիքապէս կը բարելաւէ :

Մշակութեանց բարուք վիճակը մեծ մասամբ այս ընդհանուր կանոններուն գործադրութենէն կախուած

ըլլալով հանդերձ կախուած է նաև ուրիշ ոչ նուազ կարեւոր միջոցէ մը, որ կապ չունենալով հանդերձ վերջիշեալներուն հետ, իր կիրառումը նոյնպէս անհրաժեշտ և շահարեր է :

Առիկա՝ արուեստական, բայց մերուաւոր բնուականուրիւնն է:

Այս վերջին եղանակաւ կատարուած բոյսերու աղնուացմամբը և մեղի հարկաւոր եղաղ անոնց զանազան մասերուն ճոխացմամբ՝ կարելի դարձած է զգալի և մեծապէս տարրեր արդիւնքներ ստանալ :

Այսպէս, օրինակի համար, առնենք ճակնդեղը (betterave) որուն մէկ քանի տեսակները այսօր Եւրոպացի մէջ շինուալ շաքարին համարական ամենակարեւոր նիւթը կը կազմին : Սակայն այս տունկը որ առաջները իրեն սովորական վիճակին մէջ հաղիւ 8% շաքար կը պարանակէր, այսօր, ընտրականութեան շնորհիւ բարեւուելով, կը պարունակէ մինչիւ 20% և աւելի շաքարահիւթ, ինչպէս կարգ մը գերմանական տեսակները :

Եթէ նկատի առնենք արտադրութիւնը և սպառումը շաքարի այն ահագին քանակութեան, որ այս օգտակար առնենքին միջոցաւ կ'ստացուի, ընտրականութեամբ ձեռք բերուած շաքարահիւթի այս կարեւոր տարրերութիւնը մեծապէս աչքի պիտի զարիէ :

Ահա թէ ինչպէս կը նկարագրէ կտմօն կէն, ծանօթրուսրանը, շաքարցու ճակնդեղներուն մէջէն լաւ սերմիացուներու ընտրութիւնը :

Աշնան, երբ ճակնդեղը հասնի, հողագործը իր շաքարուտ տեսակներուն մէջէն որպէս սերմիացու պէտք է ընտրէ ոչ թէ ամէնէն՝ մեծերը, այլ անոնք որ աւելի խիս (dense) են և իրենց մեծութեան համեմատութեամբ աւելի ծանր կը կռւն :

Ասութիւննին հասկնալու համար աղջուրի մէջ կ'ընկրմեն զանոնք և անոնք, որ ամէնէն շատ ու շուտ յատակը կ'երժան, ամէնէն խիտը կ'ըլլան: Եւ փորձը ցուցուցած է որ ամէնէն աւելի շաքար պարունակողները չոյնպէս ամէնէն աւելի խիտ կ'ըլլան:

Ստով ալ չբաւականանալով, աւելի ուշադիրները այդ ճակնդելներուն վրայ փառքիկ ծակ մը կը բանան, միջուկը կը քաշեն կը հանեն, և լուծելով՝ անար շաքարի ասարողութիւնը կը գտնեն: Յետոյ անոնցմէ ամէնէն անուշները ձմեռ եղանակին լաւ պայմաններու մէջ պահելով, գարնան կրկին կը անկեն, որ այս անգամ հունտ արտադրեն: Ճակնդելը, ինչպէս նուև կարդ մը ուրիշ բոյսեր, երկու տարին մէկ անգամ միայն հունտ կ'արտադրեն, և ատոր համար կը կոչուին երեստայ (plantes bisannuelles):

Լաւ ինամուած և աղէկ հողի մէջ վերառնկուած այս սերմնացուները բնական է որ տատկ ըլլան աւելի շատ քանակութեամբ շաքար պարունակող ճակնդեղներ հասցնելու:

Ուշադիր բլլալու է սակայն այս եղանակու ստացուած հունտերը չցանելու հասարակ և չընտրուած աւեստակներէ առաջացած հունտերու հետ խառն: Որովհետեւ անոնց ծաղիկներուն խառն արգաստաւորումէն առաջացած ճակնդելները կրնան աղէկ չը յաջսպի:

Իսկ ընդհակառակն, եթէ կը փափաքուի կենդանեաց կերի սահմանուած (կաթնատու կովիրու համար առաջնակարգ մնունդ մը) ճակնդելներ ունենալ, որու մէջ բնականաբար սրակին աւելի քանակութիւնն է որ պիտի փնտուի, այս պարագային սերմնացուներու ընարութիւնը պէտք է ընել անոնց մէջ ամէնէն մեծերու և կանոնաւոր ձեւ ունեցող աեսակներու վրայէն:

Միեւնոյն եղանակու կ'ըլլայ և ուրիշ տունկերու համար:

Այսպէս, բանջարանոցներու խելացի տէրերը, նայելով փափաքուած յատկութիւններուն, առննկի մը սկրմնացուները կ'ընտրեն իրենց նպատակին գոհացում տուող տեսակներէն:

Բանջարեղէններու համար կարեւոր պարագաներ են, օրինակի համար, բանակուրիւնը, այսինքն շատութիւնը, և արագահասուրիւնը, առանց յիշելու որակը: Արագահասուրիւնը մանաւանդ մեծապէս շհագրգուկան է: Սպառման և շահու կարեւոր աղբիւր մըն է այնպիսի բանջարեղէններ հասցնել և վաճառել, որոնց սովորական եղանակը հասած չէ գեռաւ Ռւսաֆի, կանոնաւոր ընարուդականութեամբ, այդ նպատակով ընտրելով միշտ միւսներէն քիչ մը աւելի կանխահաս սերմնացուները: և շարունակաբար վերընարելով անոնք միայն որ իրենց տեսակին մէջ միւսներէն աւելի շուտ կը հասնին առանց այլայլու բայսին յատկութիւնները, կարելի եղած է այդ բանջարեղէններու կանխահաս տեսակները առաջ բերել և օգտուիլ:

Այս կերպով, կարելի է ունենալ և ձեռք բերել բոյսակը և տունկեր, որ կանխահաս ըլլալու տեղ ըլլան ի հարկին սովորականէն ոււահաս, միեւնոյն ծաւալին տակ աւելի ծանր ըլլան, հասակով բարձր կամ ցած ըլլան, տարբեր գոյնէ ըլլան, կամ խառնագոյն, այս ու այն տկարութեան ու հիւանդութեանց տոկացող ըլլան են: ևն:

Առնենք այս վերջին պարագան:

Հողագործը եթէ այցելելու ելլէ ածխախտէ, ծանգէ կամ ուրիշ հիւանդութեամբ մը վարակուած իր ցորենի կամ այլ արմատիքի արար, աղէկ և ուշադիր նայած ատին դիւրին պիտի ըլլայ իրեն տեսնել և նկատել որ համաձարակին ատեն կը գտնուին արդարեւ այնպիսի տունկեր և ցողուններ, որոնք իրենց կազմին տոկունութեամբը

անվեսա մնացած են իրենց շուրջը տւեր սփռող վարակիչ հիւանդութենէն :

Կենդանիներու և մարդոց նման, յայտնի է նպանպէս կարգ մը բոյսերու համար որ նոյն տեսակին կարգ մը կազմեր հակամիքրոպական կ'ըլլան և հիւանդութեանց սերմերը չեն յաջողիք մանել անսոց արեանը մէջ։ Եթէ հոն մանեն ալ, կամ անվեսա մնալու կը դատապարառուն, կամ կենդանւոյն ու բոյսին ներքին պաշտպանողական տարրերուն միջոցաւ չեղոքացուելով՝ կ'սպաննուին և կը մարսուին։

Ուրեմն այն կենդանիները և բոյսերը որ աւելի և աւելի լաւ վիճակի մէջ կը պարտաւակեն այս ինքնապաշտպան տարրերէն, աւելի դիմացկուն կ'ըլլան քան նուազ կամ գէշ վիճակի մէջ ունեցողները։

Սրդ. Եթէ այս բնական միմիթարիչ երեւոյթը չըլլար, դիւրաւ կարելի է եղբակացնել թէ՛ ո և է համաճարակ մը նոյն երկրին բոլոր բնակչութիւնը պիտի վարանէր, մինչ գիտենք, օրինակի համար, որ շատ վանդաւոր և վարակիչ հիւանդութեանց միջոցին խսկ, գիշեր ցորեկ հիւանդներու քով ապրող, մտնող ելլող անձեր կան, որոնք բնաւ բան չեն ըլլար։

Այժմ մեր նիւթին գառնալով, կը կրկնենք որ եթէ խնամու հողագործը ժողվէ իր այդ հիւանդ արտին մէջէն հիւանդութեան դիմացրած ցողունները, և զանոնք հիւանդութեան սերմիկներէն լաւ մը մաքրելով խնամով մը անսոց հատիկները բազմացնէ, մեծ հաւանականութիւն կ'ունենայ որ պիտի յաջողիք հիւանդութեանց եթէ ոչ բացարձակալէս, բայց գէթ լաւ դիմացող տեսակներ առաջ բերել։

Այսու ամենայնիւ աւելցնենք սակայն, որ այս կարգի պարագաներու մէջ մի միայն սերմինացուներու այս կերպ ընտրութիւնը բաւական չըլլալով, պէտք է ուշադիր ըլլալ ուրիշ կարգ մը սրայմաններու եւս։

Հիւանդութիւնները, կամ աւելի ձիշով, այդ հիւանդութեանց սնկիկները և միբրոպները, դիւրաւ կ'ազդենոչ միայն այդ տկարութեանց տրամադիր կազմերու և բոյսերու վրայ, այլ նաև անսոց վրայ՝ որսոց տեղական, սննդական, մթնոլորտական են։ Պայմանները աննպաստ ըլլալով այդ բայսերուն կանոնաւոր աճումին, մեծապէս կը դիւրացնեն հիւանդութեանց ճարակումը։

Ուստի ջանալով հանդերձ դիմացկուն տեսակներ գտնել, անսոց միջավայրի գէշ պայմանները փոխելու և նպաստաւորելու մասին ալ անհոգ միալու չէ։

Յայանի իրողութիւն մըն է որ համաճարակները ամէնէն տեղի աղատու, գէշ սնանող և հակառողջապահիկ տեղեր ապրող բնակիչներու մէջ կը ծաւալին։ Նոյնն է բոյսերու համար ալ Աղքատ հողերու մէջ, ուր տեղային և կիմայական պայմաններն ևս գոհացուցիչ չեն, միմիայն սերմինացուներու ընտրութիւնը երբեք բաւարար չէ և որքան ալ քիչ չափով գէշ արդիւնք տայ բաղդատարար, նոյն այդ սերմինացուներուն վատասերումին պատճառ պիտի ըլլայ։

Ինչ որ բախնք հիւանդութեանց առթիւ, կարելի է կրկնել նաև ցորեններու պառկելու (verse) պարագային համար։ Արմատիքներու ցողունները իրարիշ աւելի կամ պակաս դիմացկուն կ'ըլլան, և կան դիմացկուն տեսակներ որ նոյն խսկ շատ խսնաւ տարի մը և խիտ ցանուած ատեն չեն պատկիր։<sup>(1)</sup>

(1) Յայանի է որ պառկելը հետեւանք է յաճախ հողին խոնաւութեան, տեղացող անձրեւներուն եւ խիտ ցանուածքին։ Ցողունները սաւականաչափ լոյս չի կրնալով ստանալ՝ ճերմակ կը մնան, այսինքն ցողուննին կանաչալրամաները լոյսի չի թափանցելքն չի կրնալով դարգանալ, բնածուխի մթերումը թերի կը մնայ ու ցողունները փոխանակ տրամալը՝ դեղնաւուն ու ջրտի կ'ըլլան, եւ ամենափոքը հավ մը կամ անձրեւ մը զերենք կը պառկեցնէ։ Այս անպատեհութիւնը այն վնասն ալ ունի, որ այս կարգի տկար ցողուններու արմատներն իրենց պաշտօնը

Յօրենազգիներու ցեղերուն լաւացումը մհծապէս կախուած է նաեւ սերմնացուներուն կանոնաւոր ընտրութեան և մաքրութեան գործէն, մաքրութիւնը ոչ միայն օսար եւ լինասակար հունտերէ սրմնք զգալապէս կը նուազեցնեն բերքը և սրակը, այլ նաեւ մաքրութիւնը և ընտրութիւնը ցանուելիք ցորենին՝ ինքն իրեն մէջ :

Եթէ ձեռքերնիս առնենք ափ մը ո և է սերմնացու ցորեն, դիւրին կ'ըլլայ հստատել որ այդ ցորենը, ինքն իր մէջ, միատեսակ չէ հասակով, կազմով ու ձեռով (չնայելով որ ան նոյն տեսակէն և մրենայն հողին վրայէն քալուած է), և կարելի է առանց դժուարութեան այդ սերմնացուն երեք մասերու բաժնել — լաւ, միջակ և ստորին տեսակներ :

Արդ, եթէ ենթազերնք որ ստորին սերմնացուէն բան մը չպիտի ստանանք կամ չատ չնչին արդիւնք մը, միջին տեսակէն՝ լաւին կէս արդիւնքը, դիւրին է հաշուել ուրեմն երկրագործին ընկելիք կորուսոր այս պարագային, երբ ան ստիպուած է թէ գէլին և թէ միջակին համար, հաւասարապէս նոյն ծախսը՝ և աշխատութիւնը նուրիել որքան լաւին. մինչդեռ միջին և ստորին տեսակները լաւին պէս յաջող բերք մը չպիտի արաւագրեն. այն պարզ պատճառով որ այդ սերմնացուները, այդպէս ըլլալու համար, աննպաստ պայմաններու մէջ գտնուած են և չեն կրնար իրենց կատարեալ հասունութեանը հասնիլ: Անկատար և տկար էակներէ հնար չէ կատարեալ և առողջ սերունդ մը ստանալ: Ամիկա ընդհանուր կանոն մըն է:

Բնականն ըիձակի մէջ չի կրնալով ի գործ դնել, հասիկները եւս կանոնաւոր զարդացումէ զուրկ կը մնան:

Անցողակի ըսնեք որ արմտիքներու պառկիւլը առաջ կուտայ նաեւ, երբ բոյսին ցողունները եւ տերեւները սովորականէն առատ ըլլան, բորակածնային պարաբութեանց անհաշիւ եւ չափականց գործածութենէն:

Ինչ որ է մարդոց և անասուններու, նոյնն է և բոյսերու մէջ, այսպէս, կօլօսուրիւնը (paine, փոքրիկութիւն), կրնայ ցեղական յատկաթիւն մը ըլլալ — նզաստաւոր կամ աննպաստ, այդ տարրեր հարց է — որ իբրև տեսակ մը կը համարուի, երբեք հիւանդագին վիճակ մը: Բայց երբ նոյն տեսակի բոյս մը, միեւնոյն հողին վրայ և միեւնոյն պայմաններու մէջ, տարրեր տեսակի արդիւնք այս, այս վիճակը բնական ըլլալէ հեռու՝ կամ հետեւանք է ծերելու և պաղարերելու անկարողութեան և կամ, կարողութեան պարագային, պատճառ պիտի ըլլայ իրեն նման տկար և վատուժ արդիւնք մը արտադրելու: Ամիկա բացորոշ է:

Սյդ ակար սերմնացուն, իր աճման շրջանին մէջ կամ մէջ կանոնաւոր սնունդ ստացած չէ, կամ բուսային և կենացանական հիւանդաւթենէ մը վարսակուած է և կամ, վերջապէս, իր կանոնաւոր աճումը արդիւող և նուազեցնող ու և է աննպաստ պայմանի մէջ գտնուած է, որով չի կրնալով իր ցեղին և տեսակին ծայրագոյն լրութեան աստիճանին հասնիլ, վատասերած, հիւանդ և ձնիմ մնացած է:

Միակ միջոցը և ճարը, բերքը փրկելու համար, այդ տեսակ տկար տունկերու մէջտեղին վերցուիլի է, ինչ որ սերմնացուներու ընտրականութեան նզաստակին մէկ մասը կը կազմէ:

Ասոր համար, սերմնացուներու պարզ մաքրութիւնն իսկ և մաղումը և զօնումը — առաջնակարգ կարեւորութիւն ունի:

Արմտիքներու և ցորենի համար մասնաւորաբար՝ այս նզաստակով կը գործածեն յատկապէս շինուած մաղիչ և զիիչ մեքենաներ (trieurs), որոնք մհծածակս չըլլալով հանդերձ, մէկ կամ երկու համար գիւղի մը հասարակութեան կրնան լիտովի բաւել:

Այս մեքենան ոչ միայն իրարմէ կը ջոկէ վայրկենա-

պէս, ցորենին մնծ, փոքր ու միջակ տեսակները, այլ և  
անոր խառնուած քարերը, հողը և օտար հունակերը:

Մեքենան չի գտնուած տեղերը, կարելի է գոհանալ,  
առ հարկի, ուրմնացու արմտիքներու կամոնաւոր և ու-  
շաղիր մաղումներովը, որոնք եթէ զտիչ մեքենային  
առաւելութիւնները և արագութիւնը չունին, սակայն  
մասամբ մը կը գարմաննեն դործին անսպատեհութիւնները:

Իսկ ցորենազգիններու մէջ ձեռք բերելու համար  
նորանոր տեսակներ, որոնք իրենց զանազան յատկու-  
թիւններովը միւսներէն տարբերուին և օգտակար հա-  
մարուին, ուրիշ միջոց մըն ալ կը գործածուի, թէն  
յամբ՝ բայց վերջին ծայր լու և ապահով:

Հողագործը, ուշնձքէն քիչ առաջ, արակին մէջ պար-  
տելով, ձեռքի մկրտառվը խնամով կը կարէ և կը  
հաւաքէ՝ ցանքին մէջ իրենց ձեռովը, մեծութեամբը, ա-  
ռաստութեամբը, որակովը և հիւանդութեանց դիմացկու-  
նութեամբը փայլող այն ամէն հասկերը որոնք շա-  
տերու մէջ այդ առաւելութիւններով աչքի կը զարնեն:

Այսքանով ալ չբաւականանալով, ուշիմ հողագոր-  
ծը այդ հասկերուն վերի և վարի մասերը ևւս ձգելով,  
իբր նմոյշ-սերմնացու կը զատէ հասկին մեջտինները,  
որոնք ընդհանրապէս հասկին լաւագոյն հատիկները  
կ'ըլլան, և այդ հունաերը հետեւեալ տարին տառնձինն  
ու մասնաւոր խնամքներով կը ցանէ, նմանները բազ-  
մացնելու համար:

Բայց այսքան ուշադրութիւն պահանջող մեթոսիկ  
գործ մը կ'ուզե՞ն և կրնա՞ն ընել մեր հողագործները: —  
Ոհա՛ խնդիրը:

Որքան ալ, սակայն, լաւ ընտրութիւն ըլլայ արմու-  
տիքներու և առհասարակ միւս բոլոր օգտակար բոյսերու  
— ինչպէս, օրինակի համար, գետնախնձորի — սերմ-  
նացուներու մասին, պէտք է զիտնալ որ միշտ միւսնոյն

տեղի հողերուն, և երբեմն նոյն իսկ մրեւոյն գաւառով  
հողերուն վրայ, անոնց յաջորդական ցանքը, վասելով  
անոնց բարելաւումի աշխատութեանց, կամաց կամաց  
կրնայ այլասերել զանոնք:

Չենք մաներ պատճառներուն խորը: Կը յորդորենք  
միայն թէ աւրուիլ սկսով այդ կարգի բայսերուն հուն-  
տերը փոխելու է քիչ թէ շատ հեռաւոր տեղերու վրայ  
առաջ եկածներով, ուշաղիր ըլլալով, բնականաբար,  
որ անոնք օտար հողային և կիմայական մեծ տարբե-  
րութիւններ ներկայացնող տեղերէ չըլլան:

Ուստի խելացի կերպով մը երբեմն երբեմն ի գործ  
գնելով սերմնացուներու փոփոխութիւնը և տեղափո-  
խութիւնը, անոնց այլասերումին և յոռեփոխութիւնն  
գէմը կ'առնուի արդիւնապէս:

Թոյսերու աղնուացումը և կատարելագործումը ձեռք  
կը բերուի նաև միեւնոյն բոյսին տարբեր լաւազոյն տե-  
սակները իւրարու խառնուած ցանելով: Այս խառնութիւնն  
անոնց ծալիկներուն իրարմով փոխարգասաւորութիւնը  
առաջ պիտի բերէ նորանոր տեսակներ, որոնք իրենց մէջ  
պիտի մարմնացնեն իրենց նախատեսակներուն լաւագոյն  
յատկութիւնները:

Այսպէս, օրինակի համար, ըսենք թէ ցորեն մը  
ունինք որ մեծանատիկ է ու առատ բերք կուտայ,  
բայց ենթակայ է այս ինչ հիւանդութեան՝ պառկելու,  
ցրտառութեան ևայլն: Ուրիշ սերմնացու մը եւս ու-  
նինք, որ նուազ ենթակայ ըլլալով այս կամ այն հի-  
ւանդութեան, չունի սակայն միւսին առատութիւնը  
և որակը:

Եթէ այդ երկու տեսակները իրարու խառնելով ցա-  
նքնք, անոնց խառն արգասաւորումէն ծլած հատիկները  
պիտի ունենան անոնց երկուքին յատկութիւնները,  
այսինքն պիտի ըլլան լաւահատիկ եւ դիմացկուն իիւան-  
դութեան դէմ:

Այս եղանակու կարելի է իրարու խառնել նաև ուրիշ ամբողջ տեսակ բայսերու և տունկերու այս ու այն շատկութիւնները, որոնք միեւնոյն տունկին վրայ միասին չեն գտնուիր: Այս պարագան մասնաւորապէս շատ կը գործածուի ծաղկեմշակութեան մէջ, արտադրելու համար նոյն տեսակի լազմագոյն և բազմատերեւ ծաղկիներ:

Աւելցնենք անցողակի թէ ինչպէս կենդանեաց, նոյն պէս և բայսերու մէջ խառնածիներէ (métisses) և խառն արգասաւորումներէ (croisement) առաջ եկածները միշտ լաւագոյն կ'ըլլան. և այս մեթոսը յաճախակի ի գործ դնելու է, այսինքն նոյն ցեղի տարբեր տեսակներու սերմացուները իրարու խառնելու է, աւելի ազէկ նոր տեսակներ ստանալու համար: Սոյն կարեւոր բնախօսական երիւոյթին վրայ մենք այսքան մը յիշատաշութեամբ կը բաւականանանք:

Իր գործնական հետեւութիւն, չի մոռնանք ըսել միայն. որ մեթոսիկ խառնուրդ մը չկատարուած տաենն իսկ, եթե ո և է բայց մը կոմմ տունկ մը տեսնուի որ խորապէս և բացառաբար կը տարբերի իր միւս նմաններէն՝ և սակայն լաւ. և նպաստակայարմար կը թուի, ուշադրութեամբ խնամելու, հասցնելու և պահելու է զայն իրր սերմացու: Այս կերպով եւս կարելի է ստեղծել բալորովին նորանոր տեսակներ:

Բնական այս կարգի զարտուղութիւնները, զօրս հասարակ լեզուով կը կոչենք նրենուրիւն (monstruosité), կարծուածէն շատ աւելի կը պատահին, և կենդանեաց մէջ եղանակներէն աւելի տեսական ու հաստատուն կ'ըլլան բոյսերու մէջ:

Մասն բոյսերու համար, եթէ խառն ցանումները օգտաշատ արդիւնքներ առաջ կը բերեն, սակայն կարգ մը տունկերու, մասնաւանդ ծառերու և որթառունկերու համար, բարելաւումի, ազնուացումի կարեւոր ազդակը պատուասն է:

Բարեբաղդաբար, մեր մէջ, ասիկա բաւական հասկցուած ու տարածուած ձեւ մըն է որպէս զի հարկը ըլլայ երկարօրէն ծանրանալ պատուաստին բազմատեսակ օգտաներուն վրայ:

Պատուաստի համար իբր մայրացու պէտք է ընտրել — այսինքն անոնք, որոնց վրայ պատուաստ պիտի ըլլայ — այնպիսի ծառեր, որ նոյն տեսակին վայրենի տեսակը ներկայացնեն: Ասիկա այն առաւելութիւնն ունի որ այդ տեսակի մայրացուն իր բնական վիճակովը աւելի առոյգ և կանոնաւոր է՝ թէն պատուղը աղէկ չըլլայ: այս մայրացուին վրայ պատուաստելու է նոյն տեսակի՝ իր պատուղին օրակալի և քանակովը լաւ ծառերէ առնոււած պատուաստները:

Սամէն ոք գիտէ պատուաստով և առանց պատուաստի ստացուած նոյնանեսակ պատուղներուն և մասնաւորաբ խալովին անագին տարբերութիւնները:

Սակայն յանձնարարելի չէ անգամ մը պատուաստուած ծառերու պատուղներուն կուտերը գործածել իրը հուն նոյնանեսակ ծառեր արտադրելու համար: Ասիկա սիստ բան մը կ'ըլլայ և արդիւնքը՝ յաճախ սլըրալի: Պատուաստը բնական ուղղակի միջոց մը չըլլալով, անիկ սուաջացած սերմերը կանոնաւոր (normal) չեն ըլլար: Տնկելու յատուկ կուտերը բան իսկ լաւ և առողջ կազմ ունեցող չի պատուաստուած տեսակներէ տանելու է, և ապա միծնալէ ետք, լաւապատուղ ծառերու պատուաստով զանոնք պատուաստելու է:

Պատուաստի բազմաթիւ ձեւեր կան. որոնց վրայ զանց կ'առնենք սակայն խօսիլ. քանի որ մեր նպատակն գուրս կը մնայ այդ: Քսենք միայն որ պատուաստը ոչ միայն լաւ պատուղներ, ձիթապատուղ և այլն ստանալու միջոց մըն է անվիրէպ, այլ և Եւրոպայի մէջ — Թրանսամասնաւորապէս — Փիլօքսէրայի դէմ պաշտպանուելու

համար ամերիկեան որթատունկի մայրացուներու վրայ կը պատուստեն տեղական լաւ խաղողներու պատուստաները,

Եւ որովհետեւ ամերիկեան որթատունկերու արմատները անվաս կը տոկան ֆիլոքսէրայի տերութիւններուն, ատով կարելի եղած է, հնարաւորութեան սահմանին մէջ, պահպանել ֆրանսական այնքան' նշանաւոր գինի արտազրոյ որթատունկերը :

Ասոնցմէ զատ, մեծապէս կարեւոր է սերմնացուներու տարիք և անոնց պահպանութեան պարագան :

Հունտերու և սերմնացուներու հնութիւնը զգալապէս կը նուազեցնէ անոնց տալիք բներք և բներքին որակը : Իրաւ է որ, կարգ մը սերմնացուներ տեղի կամ երկար տարիներ կրնան պահել իրենց ծրողական յատիւթիւնը, սակայն կարեւոր չափով մը եւս տարուէ տարի կը կորսնցնեն զայն :

Սյս կէար կարեւոր է ուշադրութեան առնել երբ մանաւանդ դուրսին պիտի գնուին սերմնացուները : Ուստի հետամուտ ըլլալու է տեղեկութիւններ առնել անոնց թարմութեան մասին և նախորդ տարւոյ բերերեն միայն բներել սերմնացուները :

Սերմնացուներու պահպանումը նոյնպէս կարեւոր է : Զգուշանալու է զանոնք դնել մութ, խոնաւ, հովանցիկ և զուրա օդի մէջ, տեղերնին բնգհակառակր չոր, օդասուն և բարեխառն ըլլալու է անոնց սաղմերուն շնչառութիւնը և առողջութիւնը պահպանելու համար :

Գեանախնձորի, սօսի, սիստորի նման բոյսերու մութ տեղեր պահօպանումը այն անպատճութիւնը ունի նոյնպէս՝ որ մթութիւնը նպաստելով անոնց անժամանակ ծլումին, զանոնք կը թոռմեցնէ և անոնդական յատիւթիւննին կը պակսեցնէ :

Իսկ խոնաւութիւնը և մութը միասին, պատճառ կ'ըլլան որ սերմնացուները, եթէ անոնք մանաւանդ

ջրալի են, չիւանդութիւններով վարակուին՝ նեխութեան և փոռութեան մնկիկներով ծածկուելով :

Իսկ արմտիքներու այն սերմնացուները որ հիւանդարակը կուգան. ինչպէս, օրինակի համար, ժանգէ և ածխախտէ վարակուած արտերէ, խոնմութիւն է զանոնք ցանելի առաջ, այդ հիւանդութեանց իրենց փակած սերմրկները սպաննել, հականեխսական լուծուածքի մը մէջ ցողելով :

Լաւագոյն լուծուածքն է կապոյ ռապով կամ ըլպամանիկով (sulfate de cuivre) պատրաստուածք : Տասը օխա տաք ջուրի մէջ կը լուծեն մօտ եօթանասուն և հինգ տրամ շըպամանիկ և տախտակի վրայ փոռուած սերմնացու ցորենին վրայ թափելով թիակով մը կը խառնեն, մինչև որ բոլորն ալ թրջուին, Այսպէս թրջուած ցորենը պարկերով կը ծածկին և միւս օրը միայն կը ցանեն :

Իսկ զանոնք օտար և վեասակար խոտերու սերմերէ ազատելու համար՝ պէտք է ուշադրութեամբ մաղել մաղերով՝ կամ մազիչ ու զափչ մեքենայով (trieur), մանաւանդ ցորենը, որ այդ օտար ու գէշ խոտերու զարգացումին շատ նպաստուոր գետին մըն է :

Կը կրկնենք թէ երբ մանաւոր կամ արուեստական լնարականութիւնը կը դազրի ներգարծելէ, բայսերը կը ձգտին հետզհետէ մօտենալ իրենց նախնական այն հաւասարակշիռ վիճակին, — որ նոյն տեսակին նախսատիպը համարուելով, ամէնէն առելի հաստատուն կը մնայ, — կամ այն է իրենց վայրենի վիճակին :

Երկրագործական տեսակէտով տսիկա փափաքելի բան մը շըլլալով, խոնաւ հողագործը ընդհակառակին ջանալու է ոչ միայն ձեռք բերուածք պահպանել, այլ և առելի աղէկին համնիլ :

Էտօն կէն այսպէս կ'եղրափակէ ընարականութեան նպաստակը, ունենալ առաջիններեն լաւագոյն յատկութիւններով օժուած բերք մը, զանալ որ այդ յատկու-

թիւնները աւողի տեսուին, եւ մանաւանդ՝ ուշադիր ըլլալ որ անոնք վատասերումով կրկին չոչնչահան :

Սւելորդ կը համարինք ուրիշ օրինակներու վրայ ծանրանալ : Կրնացինք բազմապատկել անոնց թիւը հետեւելով այս ու այն մշակալան տառնկին կամ բայսին : Մենք բաւականացանք միայն արուեստական ընտրականութեան սկզբունքը, օրէնքները . կարեւորութիւնը և գլխաւոր կերպերը ցուցնելու . դիւրբմբուելի օրինակներով և յարակից թելադրութիւններով :

Սւելի մանրամասնութիւն փաքր տեսրակի մը գործը ըլլալէ աւելի իր կոչումն արժանի հողագործին գործն է :

Կ'ընդունինք որ տեսականի մէջ այսքան դիւրին բացատրուած այս կանոնները, գործնականի մէջ նոյն դիւրութեամբ և արագութեամբ չի կրնան գործադրութիւն : Այսու սակայն գիտնալու է որ ընտանի բոյսերու և կենդանեաց ներկայ կատարելագործեալ վիճակը՝ մէկ օրի, մէկ գարու պարտական չենք, այլ տարիներու և գարերու յաջորդական, շաբունակական ու սիստմազիք աշխատութեանց :

Զէ՞ որ երկրագործին կեանքը և յոյսը աշխատութեան, տոկունութեան և համբերատարութեան մէջ կը կայսնայ : Ռւբեմն թո՛ղ ան գիտնայ իր այդ քրտնաշտամաշտապութիւնը և համբերութիւնը՝ խելացի գործունէութեամբ մը՝ աւելի օգտաշատ և աւելի սովահով առաջի մը գրաւականը գարձնել, թէ՛ իր և թէ ընդհանուրի շահուն համար :

Եւ ուրիշ կերպ արդէն հասրաւոր չէ :

Գէթ այսօրուայ հողագործը այն առաւելութիւնը ունի, որ արդէն կատարելագործուած բոյսերու և կինդանիներու հանգէց կը գտնուի — արդիւնք հիներուն և ուրիշներու յոգնաշան տքնութեանց — որոնց համար ինքը ոչինչ ունի բնելիք . եթէ ոչ՝ ուշի ուշով անոնց նետնիլ ու շարունակել պարզապես, անոնց արդիւնքը քաղելու համար :



NL0289583

17. 092

ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

Գիր 1 Գամելիան